

ՀՏՏ 809.198.1

Հայոց լեզու

## ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԶԱՓԱՇՈՅՈՒՄ Ծուշանիկ ՍԱՀՅԱՆ

**Բանավի բառեր՝** արտահայտչականություն, բանադարձման միջոց, խորքային հակադրույթ, ծավալուն հակադրույթ, հակադրության գեղարվեստական մարմնացում, համաժամանակյա հակադրություն, ձևական հակադրույթ, պատկերավորման միջոց, պարադոքս, տարածամանակյա հակադրույթ, օրինարուն՝ նրաբանություն:

**Ключевые слова:** выразительность, глубокий антитезис, контраст, художественное воплощение одновременного контраста, формальный метод визуализации, парадокс, асинхронные противоположности, оксюморон.

**Keywords:** expressiveness, deep antithesis, contrast, artistic realization of simultaneous contrast, formal method of visualization, paradox, asynchronous contrasts, oxymoron.

*Sh.Saghyan  
Antithesis in the Poetry of Hamo Sahyan*

*The article deals with antithesis in the poetry of Hamo Sahyan.*

*The famous poet used antithesis to show human being's characters.*

*The main unit of antithesis is antonym. H. Sahyan has use linguistic and speech antonyms.*

*There are poems based on antithesis.*

**III.Сагյան  
Антитезис в поэзии Амо Сагияна**

*В статье исследован антитезис в поэзии Амо Сагияна.*

*Данным стилистическим средством великий поэт выявил противоречивость человеческого характера, собственное восприятие природы и общества.*

*Основное языковое средство антитезиса - антонимы. А.Сагян использовал как языковые, так и речевые антонимы, выраженные словами, синтагмами и предложениями. Редко встречаются стихотворения, основанные на антитезисе.*

Հայ լեզվաբանության մեջ հակադրման հիմքի վրա կառուցվող ոճական միջոցներ են ընդունվում հակադրույթը /հակադրությունը, հակասույթը/<sup>1</sup>, օրինարունը, բառացի՝ նրբարանությունը, պարադոքսը, բառացի՝ երկայրարանությունը<sup>2</sup>, հակադրությունը<sup>3</sup> և այլն: Հակադրույթը/հակադրություն տարբերակներն առայժմ գոյակցում են, թենի տարածման միտում է ստանում առաջինը: Այս դեպքում հակադրույթը համարվում է հակադրության՝ օբյեկտիվ և մարդկային իրականություններին, մտածական, զգացական ընկալումներին հատուկ հակասական վիճակի շեշտված ոճական արտահայտությունը:

Լեզվաբաններ մեծ մասի կողմից հակադրույթը համարվում է արտահայտչականության //բանադարձման միջոց: Հ. Հարությունյանն ընդունում է իրեն պատկերավորման միջոց<sup>4</sup>, Պ. Պողոսյանը՝ ներհակության ձևերից մենքը<sup>5</sup>:

Լեզվաբանները հակադրույթը հիմնականում քննում են հականիշների ոճական հնարավորություններին անդրադառնալիս, առանձնացնում լեզվական կամ այլ բնութագրմամբ՝ բուն// համագործածական և խոսքային /համատեքստային/ հենդինակային հականիշները<sup>6</sup>: Նշվածի հետևանքով հաճախ ստվերի տակ են մնում հակադրույթի՝ առանձնապես շարահյուսական ծավալուն միավորներով կառուցման եղանակները:

Գոյություն ունեն խորրային հակադրություն («Հակադրությունն առավել ուժեղ է լինում, երբ բուն հակադրություն արտահայտող բառներն իրենց հերթին ունենում են հականիշ բառերով արտահայտված լրացումներ: Նման դեպքներում, թվում է, թե առկա է կրկնակի հակադրություն, բայց իրականում խորրային հակադրություն է ստեղծվում»<sup>7</sup>), համաժամանակյա, տարածամանակյա հակադրություններ՝ հասկացությունները:

<sup>1</sup> U. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, էջ 87, Եր., 1984:

<sup>2</sup> Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, հ. 2, էջ 175, Եր., 1991:

<sup>3</sup> Ն. Առ. էջ 169:

<sup>4</sup> Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, էջ 123, Եր., 1986:

<sup>5</sup> Պ. Պողոսյան, էջ 165:

<sup>6</sup> U. Մելքոնյան, էջ 84:

<sup>7</sup> Պ. Պողոսյան, էջ 166:

Հակադրույթի միավորներ կարող են լինել՝ բառերը, շարահյուսական տարբեր կապակցություններ՝ համադասական, ստորադասական, ստորոգումային, պարբերույթը կամ խոսքային ծավալուն այլ միավորներ:

Բառային և բառերի ստորադասական կամ համադասական կապակցություններով միավորները հիմնականում գործում են այն հակադրույթներում, որոնց միջոցով նոյն առարկան, իրողությունը բնութագրվում է հակադրական հատկանիշներով: Գործում են լեզվական / համագործածական և խոսքային / համատեքստային հականիշները: Սրանց հարաբերակցությունը և դերը տվյալ պարագայում տարբերակված է: Գեղարվեստական ոճում մեծ է խոսքային հականիշների արժեքը: Լեզվական հականիշների դերն էական է տրամարանական-դատողական հակադրույթներում: Ստեղծագործող կարող է նման հականիշների գործածությանը յուրահատուկ գեղարվեստական արժեք տալ: Օրինակ՝ Հ. Սահյանը ինքնաբնութագրական որոշ հատվածներում լեզվական հականիշներ է գործածել այնպիսի համատեքստում, որ նրանք ընդլայնել են իրենց իմաստային դաշտը. օրինակ՝ հին-նոր գույզը իմաստային նրբերանգներ է ստացել հետևյալ հատվածում. Մի տեղ հին-հնամաշ, Մի տեղ դեռ նոր էի (ԴՇ, 125): Կամ՝ Ես նա եմ, նա.... Ով սպանվեց, բայց չմեռավ (Ե, 303): Մի այլ դեպքում հակադրույթի նզրերից մեկը հոմանշային շարքով է ներկայանում՝ միտքն ընդգծելու համար. Մենքի համար անխելք, Անխելահաս, անզետ, մենքի համար՝ խորունկ Խնձրի նմուշ էի (ԴՇ, 125): Կամ՝ Մենքի աչքի լույսը, մենքի աչքում, սակայն, Անխիղ աչքահանիք Եվ աչքի փուշ էի (ԴՇ, 125):

Որպես խոսքային կամ համատեքստային հականիշներ են հանդես գալիս միմյանց հետ մասամբ հարաբերակցվող կամ բնավ շարաբերակցվող երևույթների, առարկաների անվանումներ : Տվյալ պարագայում նման հականիշների արժեքը կարող է տարբեր / հականիշները կարող են տարարժեք լինել՝ գեղարվեստական հետաքրքրի խոսքի կառուցում, չափածոյում նաև՝ նոյնահանգություն: Նշվածի համակցումն է վերը նշված/ վերոբերված նոր-հին հակադրույթին իմաստով առնչակից շիփշակավոր հակադրույթունը, որ հետինակը գործածել է նոյն «Ես բախտավոր էի» բանաստեղծության երկրորդ հատվածում: Կամ՝ իշխան, զլիի տեր- թիապարտ հակադրույթունը՝ Ես իմ իշխանն եմ, իմ զլիսի տերը, Եվ ինձ թվում է մեծ ու անպարտ եմ, Բայց ինչ-որ չափով և ինչ-որ մի տեղ Դեռ թիապարտ եմ (ՄԱ, 14): Հածելի, կենսալից-տիհած, հիվանդազին տարողունակ հակադրույթան գեղարվեստական մարմնացում է՝ Մենքի համար ծաղիկ Ու ծաղկափր էի, Մենքի աչքում միայն հյուծախտավոր էի (ԴՇ, 126) (նմանության նզրեր կան Պ. Անակի կարմրապետ-ախտավոր հակադրույթան հետ, տես ՍԵ, 158):

Շարահյուսական տարբեր կապակցությունների՝ որպես հակադրույթի նզրեր կամ միավորներ հանդես գալով ստացվում են բազմանդամ կառույցներ՝ հիմնականում խառը հականիշներով: Բազմանդամ կառույցներ են ստացվում, նրբ՝ 1) հակադրույթան ոլորտ են ներառվում տարբեր, ոչ հարաբերակից կամ հարաբերակից իրողույթուններ՝ համապատասխան հակադրի հատկանիշներով՝ օրինակ՝ սար-մարդ շիարաբերակցվող իրույթների հակադրույթունը դուք-ես դերանուններով, իրազում է լեզվական հականիշներով. Դուք միշտ նորոգ, ես՝ հնացող, Դուք՝ մնացող, ես՝ զնացող (ԴՇ, 188): Կամ՝ հասկացության/նրանության և նրա մարդկային դրսորման հակադրույթուն է մայրմայրություն. Կարող է մայրը կուրանալ հանկարծ, Իսկ մայրությունը կուրանալ չունի (ԴՇ, 193): Ավանդական բարբերի նկարագրման օրինակ է. Ոլոր՝ կապած շուն, լինդը ճամփորդ է (ԻԲԶ, 99): Փուշը զինված է, ծաղիկն՝ անզետն: Ծաղիկը խոնարի, փուշն՝ աներես(ԻԲԶ, 63):

2) Հակադրույթան ոլորուում նոյն իրողույթունն է կամ՝ ամբողջի և նրա մասնավորված դրսորման հակադրույթամբ՝ Երախտագետ ողի, Սակայն իբրև որդի Երախտամոռ էի (ԴՇ, 126): Կամ էլ՝ հակադրի վիճակներով՝ Փոթորիկներ են նորում հատակիս, Թեև երեսից այսպես հանդարտ եմ (ՄԱ, 14):

Ինչպես վերոբերված օրինակներից երևում է, կապակցական միավորներում քիչ են բառակապակցություններով արտահայտվածները՝ Մենքի համար դեռ ամուսն թեժություն, Իսկ մենքի համար աշնան մշուշ եմ (ԻԲԶ, 23):

Հ. Սահյանը գործածել է նաև ընդհանուր նզրերով հակադրույթներ: Օրինակ՝ Փուշը՝ գորավոր, ծաղիկը՝ զոհ, Էլի ծաղիկն է աշխարհից զոհ (ԻԲԶ, 63): Այս դեպքում ծաղիկը հակադրույթան մեջ է ներառվում երկու իրարամերժ վիճակներով՝ անզորության հակադրվելով մի այլ առարկայի փուշին,

8. Որոշ դեպքերում վերջիններս կարող են տարբերակված լինել: Կան զուտ հեղինակային հականիշներ, որոնք արդեն այս կամ այն հեղինակի անհատական ոճի սեփականությունն են դարձել և վաղուց իբրև այդպիսին արձանագրվել ուսումնասիրություններում: Օրինակ՝ լեզվարվեստի անզուգական վարպետներ Հ. Պարոնյանի, Հովհ. Շիրազի, Պ. Անակի գործերում:

և զոհույթան հակադրվելով իր անզոր փիճակին: Կամ Վկա է հողն այս ցավոտ, ԹՇ ինչքան ցավի դիմացա...Բայց Էլի օրինանք զալուս, Գնալուս միտքը չիմացա (ԴՇ, 171): Առաջին հակադրույթան մեջ ցավին դիմանալու և նրանից գրիանալու հակադրույթունն է, երկրորդում՝ ապրելու իմաստի և մահվան անհմատության հակադրույթունը:

Գնդարվեստական արժեքով հակադրույթներ են զեղչված կառույցներով/զեղչման արտահայտչամիջոցով կառուցվածները: Օրինակ՝ Յավերս ասում են. -խաչվիր, Հոյսերս ասում են. -կզա (ԴՄ, 82): Խակադիր զգացումների՝ ցավի, անհուսույթյան և հույսի մտածումները հետինակը ներկայացրել է՝ խաչվիր, քանզի չի ցա - մի տաճջվիր, քանզի կցա շարակյուսական կառույցների՝ զերադաս, մյուս զեպքում ստորադաս բաղադրիչի զեղչմամբ: Արյունքում հակադրույթների մյուս եզրում ստացվում է խաչվիր - կզա զեղարվեստական հետաքրքրի կառույցը:

Ծարահյուսական կապակցություններով արտահայտված հակադրույթներում կարող են անմիջական հականշային գույցներ չլինել: Յուրաքանչյուր բաղադրիչ կարող է ունենալ այն կենտրոնական բառը, որի արտահայտած իմաստը կարող է հակադրվել կողքի կառույցի որևէ բառի: Պարզապես կա կառույցների իմաստային հակադրություն՝ առանց հականշային բառային արտահայտության: Նշվածը հ. Սահյանի նախասիրած ձևերից է: Օրինակ՝ Նա, որ երբեմնի երգում էր ձեռմամբ\*, Հիմա նատել էր ձեռները ծոցում: Նա, որ թշում էր զագալթ լեռան, Հիմա հազիկ հազ քայլն էր փորձում: Նա, որ տեղով մենք կրակ էր, նրա Երակների մեջ արյունն էր պարում: Նա, որ թշու էր միշտ թամբի վրա, Կտորին նատել, աղոն էր պահում (ԴՇ, 192): Կամ՝ Աստղերի հետ վեճի մտած Բարձունքները նևա փառքի... Բայց ինձ համար անհաս մնաց Պատշզամբն այն երկրորդ հարկի (ԲՎ, 85): Մարդիկ կան, որոնց նումահու կյանքը Հատուում է Վերջին ծանոթի մահով: Մարդիկ կան, որոնց նումահու փառքը Վերջին ծանոթի Մահից հետո է ծաղկում ապահով (ԴՇ, 83): Սահյանական ոճի արտահայտություն է բնության զեղարվեստական նկարագրությունը նաև հակադրության միջոցով: «Տատնա ծորում» բանաստեղծության մեջ բնապատկերի գունային կարմիր - սպիտակ հակադրությունը ներկայացվում է կակաչ - ամպ, մեզ իրույթների միջոցով: Գունային խտացումն ապահովում է կարմիր փոխաբերության և ծխալ/ծխել բառի միջոցով. Ժայռի գլխից վառ կակաչի Խարույկներ են բլուում, կողքի ժայռ հանգիստ նստած Ամպ ու մեզ է ծխում (ԴՇ, 16): Արևաշայտց - արևազորիկ հակադրությունը ներկայացվում է բուրող ուրցի և կոկնված ձնծաղկի միջոցով: Զնծաղիկն է դեռ մի լանջին Բարուրի մեջ բնում, Դեմի լանջին ուրցի բույրից Մեղվի ուշքն է զնում (ն.ս.):

Զեւսկան հակադրության օրինակ է. Աշխարհաշեն ազգի տղա- Տուն չունեցա այս աշխարհում (ԵԲԸ, 98):

Սովորաբար հակադրույթի բառային միավորները տարբեր բանաստեղծություններում Սահյանը բացահայտում է մարդու հակասական էությունը: Որոշ երկնք հենված են մասնավոր գծերի փա, որոշներում քննվում են մի քանի գծեր: Մարդու հասարակական վարքագծի, գործունեության հակասական կողմերն են ներկայացվում «Ո՞ր է զնում աշխարհին այսպես» բանաստեղծության մեջ մարդկային էության հակասականության վերհանումը ներկայացվում է մարտնչողականության-ներկչողության, հաստատակամության և անորոշության, ինքնասիրության և ինքնախուսափման, հակադրույթամբ: Տրիման հարաբերությամբ կապակցված վերամաստավորված բաղադրիչներին բազահայտվում են նշված հատկանիշները:

Նոյն թեմատիկան է շոշափվում «Դարը» բանաստեղծության մեջ մարդու վարքագծի, գործունեության տարբեր կողմերի բացահայտմամբ: Անտառն անում արմատահան, Զրում է մացարը: Կամ՝ Բարի համար բանտ է դնում, Հանդուրժում է հավը.... Հակադրության ընդգծմանը նպաստում են նաև *աճոտա-մազար, բառ-դառ* ծավալային անհամատենելի իրողություններ:

Հակադրության ստեղծող տարրը կազմութիւնը համապատասխան է առաջնագործությանը:

Բանաստեղծական հակադրույթի օրինակ է տասն երեք տողերին չորրորդի հակադրվելը՝ Խնձագարվել են ցողուն ու բռնբջ, Խուտուտ տաս՝ քարի ուշը կզնա, Խնձագարվել է տինզերքն ամբողջ, Խսկ ինձ ասում են՝ թե Խնուրը մնա (ԴԾ, 38):

Զափածոյն տարածված է նաև հակադրույթի եզրերի առկայությունը տարբեր տներում: Կ. Սահյանը քիչ է դիմել նշված միջոցին: Օրինակ՝ «Նարը» բանաստեղծության իինգնրորդ տան մեջ է գտնվում հակադրույթի մի եզրը՝ «Հողագունդն է ջոկել-դարձել Իր մատադի զարը...., վիցնրորդ տան մեջ՝ Բայց ինքն էլ է մատադազու, Գիտի<sup>9</sup> խնագարքը....»(ԴՄ, 47):

Կան բանաստեղծություններ, որոնք կառուցված են հակադրության վրա: Օրինակ՝ «Վերադարձ» բանաստեղծությունը, որտեղ կան նաև անուղղակի հակադրույթներ:

Ամայացած տան նկարագրությունը հեղինակը տալիս է անցյալի ու ներկայի վիճակների հակադրությամբ: Գործածել է բառային, կապակցական միավորներ: Այսպես՝ **կոտես-Եղինջ**, **Վարունգ-քեղ**, **կոտրուկ** անուղղակի հակադրությամբ ներկայացվում է մշակված ու անմշակ բանջարանոցի ուրվագիծը՝ Եղինջը քիչ-քիչ Նվաճում է մեր կոտեսի ածուն, Վարունգի բնկված մարգաթմբերին Քնին ու կործուկն իրար բնրանից Պատառ են խլում (ՔԵ, 155), կամ **տաշտ-դագառ** հակադրության մեջ **կյանք**, **կենցաղային նոտիզն - ամայություն**, **լրվածություն** հակադրությունն է՝ Տաշտը, որի մեջ Խաչիպատ ապահի Հարսանյաց հացի խմորն են հունցել Եվ հոգնիանգստի խմորը նաև, Հիմա գրտնակի դագաղն է դարձել.... (ՔԵ, 156): Իրույթի գոյության և բացակայության հակադրությունն իրացվում է **զրո-կարուտ** հակադրությամբ՝ Թոնրի շրթունքը, որ մի ժամանակ Բոցից էր ճարում, Հիմա ճարն է բոցի կարոտից... (ՔԵ, 156): Մարդ- կոպ փնտրող արև անհատական հակադրության միավորները....

Ծավալուն հակադրությօթ սահմանափակ է/պատշաճ քանակով է:

Բովանդակային առումով գոյություն ունեն նույն իրույթի գոյության և բացակայության հակադրումը, ինչպես նաև՝ տարբեր իրույթների հակադրությունը:

Շարահյուսական տեսակետից հակադրությօթ ներկայացնում է՝ ա) թ) գ ) ներհակական հարաբերությամբ համադաս նախադասություններ՝ կարող է մայրը խլանալ հանկարծ, իսկ մայրությունը խլանալ չունի (ԴԾ, 193), դ) ստորադասական հարաբերությամբ նախադասություններ՝ նաև, որ երբեմնի երգում էր ձեռմամբ, Հիմա նստել էր ձեռները ծոցում (ԴԾ, 192) :

Եթե փորձենք տալ հակադրույթի ոճական արժեքը, ապա դրանցով Հ. Սահյանը տալիս է. 1. կերպարի, իրույթի անցյալի և ներկայի հակադիր տարածամանակյա վիճակներ, 2.կերպարի բնութագիրը՝ համաժամանակորեն հակասական և իր ներսում, և հասարակայնորեն ընկալելի, 3. բնության նրևույթներ....

Հակադրույթի գործածության թե հաճախականությունը, թե որակային կողմերը պայմանավորված են բանաստեղծի լեզվարվեստի զարգացմամբ: Ակզենտական շրջանի ստեղծագործություններում դրանք քիչ են: Որակային առումով առանձնանում է «Դադի ծաղիկ» ժողովածուն՝ 80-ականների ստեղծագործություններով:

Ակզենտադրյուրներ

Բարձունքի վրա, Եր., 1955

Մայրամուտից առաջ, Եր., 1964

Քարափնների երգը, Եր., 1968

Երկեր, առաջին հատոր, Եր., 1984

Դադի ծաղիկ, Եր., 1986

Օգտագործված գրականություն

Հ. Հարույթյունյան, Գնդարվեստական խոսք, Եր., 1986:Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984

### **Տեղեկություններ հեղինակի մասին.**

**Շուշանիկ Սաղյան** - բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն  
E-mail: shushaniksagyan@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս. Խանյանը: